Խ.

Սուլթան Ահմէտ Գ.ի թագաւորութեան վերջին օրերն են, զորս Հ. Միքայէլ վարդապետ կը յիշատակէ իր նամակին մէջ։ Հոն՝ ուր պատմութիւնը կ'ասանդէ՝ թէ Ծովապետին՝ այս է Քափիտան փաշայի մարմինը Հորհոր չէշմէսիի առջև կը նետեն, մեր Նամակագիրը կը յաւելու, թէ «Քափիտան փաշայի մայրը 30 քսակ ետ և (բառնալով հոնկից) թաղեաց զիւրն»։

Ահմէտ Գ.ի կը յաջորդէ Սուլթան Մահմուտ Ա.։

Գերյարգելցկոյ Աբբայ Հօրդ մերոյ

Տեառն տեառն Միխիթարայ Աստուածաբանուբեան վարդապետի

.... մեծ գազանս այս հանդերձ ամենայն նախարարօքն և զօրօք անցաւ Իւսկիւտար վասն գնալոյ ի պատերազմ յարևելս. և աւելի քան զերկու ամիս մնացին անդ ինքեանք և օրտուն իւրեանց. այսօր վաղն ասելով գնանք, և յաւուր միում, իբրու 20 կամ 30 էնկիչէրիք դրօշակ բարձրացուցեալ ի Ստամպօլ՝ զբնաւ չուկայս փակել ետուն, և ի մէջ երկուց երից աւուրց իբրու 100,000 եղեն. նաև ի յանատօլէն թափեցան, սասանումն և դողումն պաշարեաց զամենեսին. թագաւորն, մատնին քէյեան, զոյմաքան, որ է քափիտան փաշան կալելով փախեան, զիշերով եկին մտին ի սարայն, և ի միւսում աւուր թագաւորն զբեսեան ևս խեխթեաց և ետ յարտաքս բռնաւորաց. զմարմինսն կտարատեցին հայհոյեցին և քանի մի օր թողին ի հրապարակս. զմարմինսն մատանոյն չունք կերին։ Քափուտան փաշայի մայրն 30 քսակ ետ և թաղեաց զիւրն, զթագաւորն իջուցին, և եդին ի տեղի զեղբօրորդին Մահմուտ անուն, և զայլս մեծամեծս՝ զորս կալան, զորս ոչ գտին, զտունն կողոպտեցին։ Եւ քրիստոնէից վնաս շատ տուին։... Հրեշտակն վէնէցիու ի 27 սեպտեմբերի եմուտ կալերով աստ մերձ յերեկոյին, և առաւօտն մերձ ճաշուն՝ սկսաւ ապստամբութիւնն գազանաց...։

Գերյարգութեան քում ծառայ
Հայր Միքայէլ Վ.

1730 Հոկտեմբերի 13
[Կ. Պոլիս]

ԽԱ.

Ահա Ստեփանոս Ռոշքայի մէկ ուրիշ թուղթը՝ որ գլխաւորապէս կը ներկայացնէ ա. իր սրբագրած Մաշտոցին առ ի փորձ գործադրութեան լուրը. բ. նոր տոմարը հաստատելու հարցն ու ջանքերը. գ. սոյն երկուքին տպագրութեանց առաջարկներն առ Մխիթար։

Սակայն Ծիսարանի այդ փոփոխութիւնները տարբեր աչքով կը դիտուին Մինաս Վ. Պարոնեանէ առ Մխիթար գրուած նամակի մը մէջ, ուր կ'ըսէ. «Լուայ թէ տէր «Ստեփանն լեհացին եկեալ ի Դրանսիլվանիայ բազում ինչ փոփոխութիւն եկեղեցական «(որպէս է սովորութիւնն Հայոց վարդապետաց) եղեալ իցէ, մինչ զի և չուտելն «մսոյ ի շաբաթի՝ ի ներքոյ բանադրանաց հրամայեալ իցէ, և այլն, ժողովելով